Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յուլիսի 4-ին. Թիֆլիս. №27

Գ Ա Ր Լ Մ Ե Ն Տ Ն Ե Ր Ո Ւ Մ




Тип.-Лит. С. Быхова, Тифлисъ. Թիւրքերի սահմանադրական պարլամենտում, «տարազգի դպրոցականներին» պատուաստում են Օսմանի լեզուն։

ԱՂԲՈՒՐ-ՏԱՐԱԶԻ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ-ՎԱԳՈՆՈՒՄ



Յունիսի 19-ին նուիրուած ժուր-ֆիքս երեկոյթին։ Մարդը մարդու դարդը չէր գիտում, կէս գի-շերին ժամ էր ասում։

## Գ Ա Ն Ձ Ա Կ Ո Ւ Մ




Քաղաքային վարչութեան մէջ կայ մի խրատատու Ռաֆիբէկով ազգանունով, որի ոչ միայն մէկ խօսքը այլ և մատների շարժումը օրէնք է քաղաքի հայերին։ Երբ Ռաֆիբէկովն ասէ մա-ծունը սև է, Ձայնաւորները համաձայնւում են, իսկ թէ ասեց կուպրը սպիտակ է, նրանք էլ ա-սում են, ք ա յ ի սպիտակ է։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

„ԽԱԹԱԲԱԼԱ“

Ծրգիծաքանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, և գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“։

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Յուլիսի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 3 ռուբլի, իսկ նաղդ՝ 2 ր. 50 կ.

Մեր կիսամեայ բաժանորդներից խնդրում ենք բաժանորդագները շուտով ուղարկել, որպէս զի յուլիսի 1-ից թերթը կանոնաւոր հասցնենք իրենց։

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական

ՕՐԱԹԵՐԹԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Առաջնորդող յօդւածներ, ներքին տեսութիւն, գաւառական կեանք, թղթակցութիւններ, քրօնիկ, արտաքին տեսութիւն, առևտրա-արդիւնաբերական բաժին (բորսա և այլն). աշխատաւորական կեանք (աշխատանքի բորսա). մամուլ, թերթօն (գրական, քաղաքական, իրաւաբանական, մանկավարժական և այլն). թատրոն և գեղարւեստ, ժամանախօսութիւն, զաւեշտական, նամակ խմբագրութեան, յայտարարութիւններ և անդեկատու.

ՄԵՓԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ

Օրաթերթը հրատարակւելու է յուլիսի 5-ից (նոր. տառով)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ յուլիսի 5-ից մինչև տարւայ վերջը 4 ռուբլի, 3 ամիսը 2 ր. 50 կ. ամիսը 1 ր.։ Արտասահմանի համար մինչև տարւայ վերջը 6 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты «Сурандакъ»

Խմբագիր-հրատ. Աստ. Երիցեան.

Հրատարակիչ՝ Գէորգ Չիլինգարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՆ ԼԵԶՒՈՎ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ.

## ԳՐԻՄ ԹԷ ՉԸԳՐԻՄ

Մնամ էքսի օրն էր, ձիր քիրը գանլէս տարաւ, ա՛յ մարթ կօսէ, եսադուց դուն էլ կլուր ու սարբանիս չիս դնում, կօսէ, դուն ումիցից իս պակաս խելքով ու շնուրքով, մարթավարութենով թէ տանուտիրով, ակուստակով թէ ակասիրութենով։

Ախր, դուն էլ դուրթ իս ասում, ասի մաջնց վուր օչովից պակաս չիմ ու մի քանի բարաթ էլ ունել իմ, համա խօ գիգիս իմ խասիաթը սիրտս չի տալի էլի, չիմ ուզում վուր գնայ, չունքի իմ ինչ գործն է սարբանէքն ու կլուրները. ասի։

—Վա՛, թէկի նամեանիկը՝ Վարանցով-Դաշկովը, իրա պամօշնիկները, միր Թամախովը, Սամփսոն Արութինովը, Գրիգօր Հախնազարովը, Սահաթսազովը ու Կափիևը—գնում ին ու բլում ին, դուն կի նրանցմէն պակասիս, կօսէ։

—Ինչի կուլիմ պակաս ասի, համա չիմ ուզի, վուր գնամ ասի,

—Թէ կեհաս՝ գնա, թէ չիս գնա իս քիմէն ձեռը կու վիկալնիմ, կօսէ։

—Դուրթ իս ասում, ասի։

—Գասպարի արիւր, կօսէ։

Փիքր արի, փիքր արի, ու վիրջը էն ազրի էկայ վուր, քանց թէ էս տարսի մարթս կնզանեէս բաժնւիմ, ուփրօ լաւ է խանդիսան սարբանիս ու կլուրն էլ գնամ ասի, ու վիկացայ էն գիշերնէէթ գնացի դրա լէանի սարբանիէն։

Գնացի ձիր հօրուն մեանիմ ու ինչ տեհայ, ափսուս, ափսուս հին վախտ, էն էլ ինչ ասիմ, դանա դուք չիք գիգի, հէր օխնածնիր վուր ուգենաք, սատանին լեկուրի կու խաղացնիք, միթանին ռանգի կու սովրեցնիք. իմեբելին եալլի կու բռնիլ տաք, բաս էլ ինչ ասիմ։

Ջէր էլի գիփ. վուտով գլխով չէի տուն մախ, ջէր դրախցը դէս ու դէն էի մտիկ տալի, էգեբա մէ ճանանչ օրմին տասս գայ ասի, մէկէլ տեհնիմ խելիմ խուրս խալխ տեհս գալիս դրա ինձ։

—Ինչ գուզիք ասի։

—Գասպար Կալատուզովը դուն իս, կօսէ։

—Դիախ, ասի։

—Հէր օխնածի վուրթի, էս ինչ իս ասում, կօսէ, ամութ չէ՞, վուր միզ մասխարա իս դցում, կօսէ, խալխը ինչ կօսէ։

—Ախր, ինչ շառիր իք մօգոնում, տօ ռադ ըլէք. ասի, գլխեմէս, դուք ո՞վ իք, ասի։

—Վո՞ւնց թէ ով ինք, կօսէ, մինք վարժապետնիր ինք, հասուց չկօլի, կօսէ, դուն կի հեսաի իս մասխարա դցում, վուր իսկի թուլուխչու տօլ պատիւ էլ չունինք, կօսէ։

—Մաշ դուք ինչի՞ իք եանգլիշ հուդի վրայ կաղնի, ասի, ինչի սովխասով

չէք բան շինում սար. դուք չէ՞ք, սար, վուր մանէթի համա պօպուչիալնեռու վուսնիրը լիզում իք, շպիոնութին, լաքէութին, խաբարբզանութին ու խա ինչ գիդիմ, հազար մէ զահրումարութին իք անում ու սակի չկօլէքն էլ շինիլ իք անդալիանս, սար։

—Դուրթ է, էտ մինք ինք, կօսէ, համա դուն վուր էտունք գրում իս, միր պատիւը վուսաի տակն իս թաղում, կօսէ։

—Տօ, ինչ իք դուս տալի, սար. իս վո՞ւր տէրտէր վարթապետն իմ, վուր բան թաղիմ սար, ձեռք վիկալէք թէ սար, չէ՞... էս ու էս բաներումէն, էս ու էն աշխրքի խատրիէքումէն, վիրչն էլ սար, արա, հիմի ձիզ էլ նայեցէք ու սրամէն տասնուհինգ քսան տարի առաջ էլած վարժապետ ուչիտէլքին էլ. սար։

—Նրանք, կօսէ, օրինաւոր մարթիք էին, մինք նրանց լափչիքի պապաշներին էլ չաժինք, կօսէ։

—Հէր օխնած, իս էլ էտ իմ գրում, սար, ու ճամփէս բռնեցի, վուր սարքանիս տուն ժանիմ. Տօ, վուրդղանց վուրդի, լուսը քու տեսնողին, դուս պրծան միր սակաւէրներումէն մէ քանի ջուխտ խաստ ցօցիալնիր։

—Պարուն Գասպար, քիզ հիդ գործ ունինք, կօսէ։

—Ի՞նչ կու հրամայիք, սար։

—Մինք չինք կանա համփիրի, վուր դուն էտենց բիապրուս անիս, կօսէ, միր պարտիի չլէններուն։

—Ղուրթ իք հրամանք անում, սար։

—Վունց վուր մարթ, թէ չէ բանդ փիս կու լի, կօսէ։

—Ինչի՞, սար, տօ ջէհէլնիր, բաս դուք չէ՞իք վուր ասում էիք, թէ՝ մինք էտենց պիտինք ժաժ գայ ու էնենց պիտինք բլի, կօսէ, դուք չէ՞իք, վուր ասում էիք թէ՝ խուսկի ազատութինը հարգաւոր է, կօսէ, դուք չէ՞իք, վուր ասում էիք թէ ցէնզուրութինը, դուբրնատուրութինը, տնաքանդութին է. սար։

—Մինք էինք համա, մինք խօ չէինք ասում, վուր դուք էլ միզ մասխարա գցիք, կօսէ։

—Վա՜յ է, էտ վո՞ւնց կու լի սար, տօ դուք էս սահաթիս էնենց իք աշխարքս մուտրի, վուր պիտինց պրիստաւին լաւ աշինք, քան թէ ձիզ. ու ձիզ համա չը գրի՞մ, սար. ու կցեցի պատմիլ թէ ինչիր ին անում, ինչիր ին մադնում ու համ իրենց, համ միր տուն էլ ին քանդում. դուք սար. խաստ ցօցիալնիր չիք սար, խաստ ցօցիալնիրը ձիր թուսուր օզիգեալգի խափերայ չի բլի սար.. ցօցիալը ձիզ հիդ ինչ գործ ունի սար, ու վիրչն էլ հարցնի, բա ինչ վուր գրում իմ, դուրթ չէ՞, սար։

—Դուրթ է՞. դուրթ է, կօսէ։

Ճամփէս շարունակեցի, մասյ սարքանիէն, մէկէլ տեհնիմ վրա թափեցին մէ ուրիշ ջուրա մարթիք։

—Գասպար ադա, Գասպար ադա, կօսէ։

—Հը, սար։

—Ամութ է, հերիք արա, կօսէ, ինչի իս օտարներու, եադերու աղաք ու աշխրքում մասխարա գցում միր խիղճ տէրտէր վարթապետներուն, կօսէ։

—Ի՞ս, սար։

—Հրամանք իս դո՛ւն, կօսէ։

—Տօ. տէրտէրնիրը, իրենց սակութար բերնով ասում ին, գրում ին ու մինչկի Վեհափառ Հօրեուր Տիրուչն էլ արզա ին անում, վուր իրենք ամեն թուսուր պակասութիններ ունին ու դուք ո՞վքիր իք, վուր նրանց մաքիէր ատաւակատութին իք անում, սար, ու վիրչն էլ պատմեցի իմ տեհածն ու իմացածը, հինն ու նուրը ու հարցրի՝ էտենց չի՞ն, սար։

—Ի հարգէ, դրանց հախն է, կօսէ, դրանց ջէր էտ էլ քիչ է, կօսէ, համա էլի լաւ չէ, կօսէ, վուր միր սակի հոքեւորնիրը մասխարա գցէին, կօսէ։

—Տօ էտ ինչիր իք ասում, սար, վունց չիք ամանչում, ու ճամփէս առաջ արի, սարքանիէն տուն մտայ։

Էստի բասա էկայ մէ դուժին հին հին ու հասատափուր չինովնիկնիրուն, գոխատուրնիրուն, ստուակատներուն։

—Պարուն Գասպար, դիփ լաւ, համա էտ վո՞ւնց կու լի, վուր դուք միր կաթղիկուսի կալասկի ձիաննիրն էլ իք նախշի ու եամշչիկներուն ակլոր ու չրփլախ իք դուս բերի, կօսէ. եադիրը՝ անիրը, վրացիքը ինչ կօսին. կօսէ։

—Իս արմնում իմ, սար, վուր դուք ինձ իք տեհնում ու էստի ինձ իք ասում. էնդի՝ վուրդի վուր խօսելու է բլում, ձէններդ կտրում իք, սար։

—Վա՜, կօսէ, միր Կաթղիկուսի կալեասկի ձիաննիրը...

—Տօ բեդաալնիր, իփ վուր տեհնում էիք, վուր միր սիրելի Կաթղիկուսի ձիանիքը էտենց էին, բա ճաղուղ ինքներդ չէիք լծում սար, ու վիրչը հիմի ինձ իք վինաւաթ շինում սար., ինչի՞ կամիսիուս դուք էլ չըմտաք ու չտեհաք, վուր ամեն մարթ իրա գորա գործ պիտի շինի, սար, պողոսկպան կարեանիկի բան չի գիդում սար, անկարքը կարգավարութին... ու կցեցի արզա անիլ. թէ ինչի՞ր էր բլում ու ինչիր պիտի բլէր։

—Դուրթ իս հրամանք անում, կօսէ. դրանց աչքը պտէինք հանի, կօսէ, համա ինչ անինք, իփ վուր էս խալխը...

Սրանց էլ թողեցի, գուզէի մէ սկամի գթնի վրէն նստի, մէկէլ տեհնիմ վրա թափեցին ջէհէլ ու պատուէնանիք, բարիշնէք։

—Գասպարը դո՞ւն իս, հարցրին բարգացած։

—Իս իմ, ինչ կամենաք անի, սար։

—Հուզինք գլուխդ էլ. դուն քանի գլուխ ու վուսնիր ունիս, վուր միզ վրեն բանիր իս գրում, կօսէ, ամութ չի՞, մինք գանա ինչի ինք փչացնում. ի՞նչ ինք զարար տալի, վուր միզ վրէն էտենց բանիր իս գրում, կօսէ, մինք վուր միր մարթկերանց սուսայ ուրիշներու հիդ էլ ապրում ինք, կօսէ, քիզ ինչ դաւի, կօսէ։

—Դուք էլ իք դուրթ ասում. սար, ինձ ինչ դաւի, մազրամ, չունքի... ջէր խուսկիրս չէի վիրջացրի, մէ պառաւ, մէ ջէհէլ մէ քորփա մէտի վրա նիզան ու կարէս քաշքշելով կինադամ հօքիս հանեցին—դուն թէ էլի էտ թասուր բանիր իս գրի, կօսէ, էլ միր ձեռնեմէն չիս պրծնի, կօսէ։

—Ախր ձիռք վիկալէք, թէ չէ՞, իմ արիւր գիդենայ, մէ մասը միզրը կու շինիմ. սար։

—Շատ մի խօսի թէ չէ... հիմի զակոնը միր կուռն է, կօսէ, միր մարթիքն էլ վուր իմանան, թէ միզ վրայ դուն բանիր իս գրում. քիզ վրայ խիստ կու ջղրւին, կօսէ. խիլք ունիս խիլքդ քիզ պահէ, կօսէ։

Վիկացայ տեղիցս. մէ ուրիշ տիղ ուզեցայ գնալ ու նստիլ, էստի էլ միր ատուղեռնանիրը գլխիս թափեցան։

—Դուն ո՞վ իս, կօսէ, վուր միզ չիս հաւնում։

—Ի՛ս, Գասպար ադա Կալատուզցին իմ, սար. ինչ կու հրամանք անիք սար։

—Չէնդ կարէ, միր վրէն ուրիշ թաւուր թաւուր բանիր մի գրի, կօսէ. քիզ ինչ գուրձ. թէ մինք անարժան ինք սաուդենտութէնի. ան սաեպինդէրի, ան մուքթա ուսումի—խիլք ունի՞ս...

Տեհայ վուր էսաի խո կու գժւիմ, վիկացայ ու վրազ-վրազ գուս էկայ միր սարրանիեմէն. ճամփին խելիմ ժուղ, կարմնջի վրէն կաղնեցի. էկաւ մէ կնիկ ու մէրաշ ջուրը ննգաւ, իժըւմ, մէ չէհէլ տղայ էլ փայտոնով ու խաղ ասելով անցկացաւ, մէ տէրտէր էլ տեհայ տիրացուի հիդ կռւելով գնալիս. մէ մարթ ու կնիկ էլ տեհայ, իրար ուշունցնիր տալիս ու կոտրած դոնգիկն էլ կնգայ ձեռին բըռնած, սրանք էլ վուր անցան. տեհայ՝ մէ ջուխտ... հաւա ինչ ասիմ, էտունք էլ միայ ուրիշ գամ.այ համա. հիմի խո ձիզ իմ հարցնում. էստուր եղնէն վռնեց գրիմ, վուր ամենքն էլ հաւնին. ու գլխիս աւետրան չկարթան։

Հիմի Համլէտի թաւուր. Աստուձ օղորմի Աղաժովի հոքուն, նրա պէս պիտիմ ասի.

Գրիմ, թէ չգրիմ։

Գասպար Կալաստագեանց

## ԲԱՆՏՈՒՄ

Բանտս՝ լուսազուրկ, նեխած մթագնած,
Վառվռուն շողերն ներս չեն թափանցում.—
Իսկ լուսատենչիկ հոգիս նոր զարթնած՝
Մատաղ յոյզերով,
Անզուսպ թեւերով
Խաւարի միջից ինձ վե՛ր է թռցնում.

Սիրտս՝ մոռացած նիրհը լռութեան,
Ապստամբ բախիւնով դո՛ւրս է սա-
ւառնում.—
Իսկ խորաշոփնող շղթան բռնութեան
Փողպատից կոփած,
Ոտերիս կապած՝
Արգելք է լինում, ուժգին շառաչում...

Սաւառնի՛ր, իմ սի՛րտ, թռի՛ր, իմ հոգի,
Ոչինչ. թէ գերի էք ժանտ մթութեան.
Իսկ վաղը թէ ուշ, երբ ձեզ կ՚ծագի
Տենչած արշալոյս՝
Դիւթի՛չ, հրաշալոյս.—
Դուք՝ ըմբոստ նետուէք գիրկն ազատութեան

Շաւիղ

## ԼՕՏՕ

Լօտօյի համարներից աւագագոյնը-90-ը Խաղացած համարներին հրաւիրագիր ուղարկեց հետեւեալ բովանդակութեամբ.

«Ողորմած տէարք և ողորմած տիկիններ։ Յարգանացս հաւատարիքը մատուցանելով, խոնարհաբար խնդրում եմ ներկայ գտնուել լօտօյի համարների արտակարգ ընդհանուր ժողովին, որին ես հրաւիրում եմ մի անյետաձգելի հարցի առիթով»։

Նշանակւած օրն ու ժամին, բոլոր համարները, սկսած 1-ից մինչև 90 հաւաքւեցին ժողովին։ Ժողովի դահլիճը ներկայացնում էր հրաշալի պատկեր։ Բոլոր համարները տեղաւորւեցին ծանր ու մեծ համբօ, տերնօ և կւարտերնօ։ Ժողովը բացեց 90-ը։

«Պարոններ, սկսեց նա, ի հարկէ ամենից յայտնի է, թէ այս օրւանից տեղական բոլոր կլուբները վերադարձրին մեր ամեն իրաւունքները, որ մեզանից խլած էին մեր թշնամիների խարդաւանքով։ Այսօրւանից մենք լիակատար քաղաքացիութիւն ենք ձեռք բերում բոլոր կլուբներում։

Մենք պէտք է որեւէ կերպով արտայայտւենք այս մեծանշան դէպքի առթիւ, այսինքն պէտք է շնորհակալութիւն յայտնենք... բայց խնդրում եմ, առաջ ընտրեցէք նախագահ և քարտուղար»

—Խնդրում ենք, խնդրում ենք ձեզ պ. 90, նախագահեցէք։

—Չեմ կարող։

—Խնդրում ենք։

Համաձայն եմ, խնդրեմ ընտրեցէք քարտուղար։

—64, 13, 11, առաջարկում են համարները։

Ձայների առաջին մեծամասնութեամբ քարտուղար ընտրւում է 64-ը։

—«Ուրեմն, պարոններ, խօսում է 90-ը, մեզ արած պատւի համար, ես առաջարկում եմ կլուբների աւագներին շնորհակալութիւն յայտնել։

—Խօսք ենք խնդրում, խօսք ենք խընդրում լսւում է դահլիճի ամեն ծայրից։

Նախագահը.—Խնդրում եմ հերթով խօսէք։ Խօսել ցանկացողներին խնդրում եմ՝ որ քարտուղարի մօտ գրւէք։

Համարները գլտորւում են քարտուղարի մօտ և գրւում են։

—Խօսքը պատկանում է 69-ին, կոչում է քարտուղարը։ Պարոն տուղիսիւղի (69) խօսքը ձեզ է պատկանում։

—Ես ցանկանում էի ասել, սկսում է 69ը, որ բողոքում եմ։ Այո, պարոններ, առաջ այն կողմն էր, այժմ այս կողմն է, դուք ցանկանում էք, որ էլի այն կո՛ղմը լինի։

Նախագահ.—Պարզ խօսեցէք, պարոն 69 համար։

—Ներեցէք, որ ես խօսում եմ հանգուցեալ իրաւասու Ալաղասովի լեզւով... ես ցանկանում եմ ասել, առաջ այն կողմն էր, այսինքն յօմբարդում... Յիշեցէք, թէ ինչպէս մեր պատճառով, Թիֆլիզի կանայք յօմբարդ էին կրում խալիչաներ, պղնձեդէն, ժամացոյցներ և այլ իրեր. յետոյ բոլորն հանդստացաւ. իրեղէններն սկսեցին այս կողմը կրել, այսինքն յօմբարդից յետ գնացին։ Դուք ցանկանում էք, որ [illegible]ների կահ-կարասին դարձեալ այն կողմը... բողոքում եմ ընկերներ։ Ի նկատի ունենալով ձեր կազմը...

Քարտուղար.—Փեփելի նոտաներ (77), խօսքը ձեզ է պատկանում։

Համար 77.—Ես ամբողջ հոգով բողոքում եմ 69 ի խօսքերի դէմ և 69 ի գեկուցումն անւանում եմ պրովոկացիա։ Ոչ ոք ոչինչ դրա. չէ գրել։ Ընդհակառակը մեր փառքի օրերում՝ բոլորը երանութեան մէջ էին, սիրահարւում էին, կուշտ ու կուռ ուտում, զարգանում էին, պնակների տակար բարձրացաւ անհաւատալի արագութեամբ, ցեղերի մէջ համերաշխութիւնն ամրապնդւեց, հարբեցողութիւնը դադարեց, երեխաների դաստիարակութիւնն իր արժանի բարձրութեան վրայ կանգնեց, չքացան եղջիւրներն ու եղջիւրակիրները, արեւատր բարձրացաւ իր գագաթնակէտին, բոլոր անճոռնիութիւնները դարձան գեղարւեստական։

Ձայներ.—Բաւական է, բաւական.

Համար 77.—Ես վերջացրի։

Քարտուղար.—Համար 11, խօսքը պատկանում է ձեզ։

Համար 11.—Վաղուց ինձ անւանում են բարբարանի պալկաներ։ (դաւուլի չօմբախ) Ես նոյնպէս բողոքում եմ նախագահի առաջարկութեան դէմ։ Ես համարձակ խփում եմ բարբարանին և աղաղակում. բաւական է, բաւական. Ժողովրդի գրպանն հանգիստ թողէք։

Յիշեցէք, պարոններ, ձեր—չեմ ասում մեր, փայլուն օրերը. երբ վերջին գրօշները տարւեցին, խնայողական կասսաներից արիւնով ու քրտինքով յետ գնածները դուրս հանեցին և մեզ զոհեցին...

Կորչի լօտօն, ես...

Ձայներ.—Նստեցէք, բաւական է...

Համար 11.—Չեմ ուզում լռել...

Համարներ.—7, 13, 19 համար 11 ին խուլիգան, պրովակատոր, դաւաճան...

Նախագահ.—Պարոններ, կարգի եմ հրաւիրում։

Ձայներ.—Խօսք ենք խնդրում. խօսք եմ ուզում. հարցն սպառւած է։

Քարտուղար.—Պարոն հնդնոց, խօսքը ձեզ է պատկանում։

Կանգնում է գեղեցիկ հնգանոցը. Պարոններ, գիտէք ինչ է Փլիրտը, դուք ծանօթ էք էրօտիկ գիտութեան, տալցէք խնդրեմ, ո՞վ շնորհիւ Փլիրտն ու էրօտիկան Թիֆլիզում զարգացան, եթէ ոչ մեր։ Յիշեցէք սէր երգող համաշխարհային պօէտներին։ Ինչու վախենալ օպպօզիցիայից—ընդդիմադիրներից...

«Լօտօն, առանձին բաժանմունքում.»

Ի՞նչը կարող է աւելի՛ բանաստեղծական և հեշտական լինել. (սկսում է երգել).

«Երբ երկուսով Վէկոսի առանձնասենեակում...

Աղմկալից ծափահարութիւն.

—Պարոններ...

Ձայներ.—Հարցն սպառւած է. շնորհա-

կալութեան ուղերձ ատացներին. շնորհակալութեան։

Նախագահ,—Խնդրեմ ուղերձը խմբագրող մասնաժողով ընտրեցէք.

69 և 11 համարները հանդիսով հեռանում են նիստի դահլիճից։

Յովհաննէս Սանդուխեան

## ՍԱՅԻՐԻ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐԻՑ

Տաղանդաւոր մարդիկ առհասարակ միայն մի բանի մէջ տաղանդաւոր են. չկայ մէկը, որ տաղանդաւոր լինի ամէն բանի մէջ։ Բայց կան մարդիկ, որոնք միանգամայն զուրկ լինելով որևէ տաղանդից, համոզուած են, որ իրենք ամէն բանի մէջ տաղանդաւոր են, ուստի ամէն ինչի ձեռնարկում են, ամէն բանում իրենց ույժը փորձում են և պատրաստ են ամէն ժամանակ և ամենքի համար ամէն գործ կատարելու։

—

Մարդիկ իսկ և իսկ կրակի նման են փայլում.—վատ բանի մասին նրանք պատմում են երկար և մանրամասն, իսկ լաւը հազիւ մտաբերում։

—

Ժպիտը երեսից անպակաս մարդը, նոյնքան անտանելի է, որքան այն մարդը, որ երբէք չէ ժպտում։

—

Փիլիսոփայութիւնն ասում է.—որքան աւելի սակաւապէտ լինի մարդս, նա այնքան աւելի կը մօտենայ աստուածութեան։ Մեր կանայք շուտով կը դառնան մի մի աստուածութիւն.—նրանց այժմ հագուստի համար կտոր հարկաւոր է մէկ և կէս մետրով պակաս, քան անցեալ տարի։ Իսկ երբ նրանք կսկսեն եօլայ գնալ բոլորովին առանց հագուստի՝ այն ժամանակ կը տեսնես, որ աստուածութիւնը բոլորովին պատրաստ է։

—

Աստուած կնոջը ստեղծել է մարդու կողքից. այլ ոչ ականջից կամ ճակատից. այդ պատճառով էլ նա աւելի սրտով է ապրում, քան գլխով։

—

Նորերս մի կին հարցրեց ինձ, թէ՝ ինքը քանի տարեկան կը լինի իմ հայեցողութեամբ։ Ես նրան պատասխանեցի. դէմքիդ արտայայտութեան նայելով՝ կը լինես 30, կենսագրութեանդ նայելով.—60, երևակայութեանդ նայելով՝ 20, իսկ ուղղագրութեանդ նայելով, 14։

—

Որն է աւելի մեծ բաւականութիւն պատճառում կնոջը.—մի գեղեցիկ տղամարդ տեսնե՞լը, թէ մի այլանդակ կնոջ։

—

Տղամարդը ներկայանում է կնոջ առաջ իբրև բռնակալ, իսկ բռնակալի առաջ իբրև կին։ Կինմարդը խոնարհութեամբ հպատակւում է տղամարդուն և բռնակալի առաջ ներկայանում է իբրև տղամարդ։ Այժմ նրանցից ո՞րը կարող է աւելի շուտ թոյլ սեռին պատկանել։

Աւեղ Մախաթովիչ

## ԱԲԴԱ—ՈՒԲԴԱ

*Կենաց բաժակ*

—Ես խմում եմ, պարոններ, աշխարհիս ամենաիդէալական, ամենալաւ, ամենաազնիւ մարդու կենացը...

—Մեր երկուսից, Գաւրիլ Մարտինիչ, ո՞րին էք ակնարկում։

—Ինձ։

*Անյարմար ակնարկ.*

Տ ի կ ի ն ը.—Գեներալ, քեզ պէտք է նորից ամուսնանալ։

Գ ե ն ե ր ա լ.—Ես արդէն շատ ծեր եմ, դրա համար։

Տ ի կ ի ն ը.—Մտածեցէք այսքանը, չէ՞ որ կորչում է այն կենսաթոշակը (պենսիա), որը պէտք է գեներալի այրին ստանայ։

*Ընտանեկան գաղտնիք*

—Պետր Պետրովիչ, Աննա Պետրովնա, շատ ուրախ եմ։ Շատ լաւ է, որ տղաներդ հետներդ էք։ Համեցէք... եղէք ինչպէս ձեր տանը։

Փ ո ք ր ի կ  հ ի ւ ր ը.—Ոչ, հարկաւոր չէ այնպէս, ինչպէս մեր տանը։

—Ինչո՞ւ որ։

—Մայրիկս հայրիկիս քոթկել կսկսի։

*Ապագայում.*

Տ ի կ ի ն ը.—Ցոյց տուէք խնդրեմ, որևէ մօդնի կտոր։

# ՖԵԼԻԷՏՕՆ

## Ն Ա Մ Ա Կ Ը

(Պատմուածք Գ. Բրինկօի)

—Այդ ինչ նամակ էր։

—Ի՞նչ նամակ։

—Հիմա որ թաքցրիր։

—Ամենևին ոչ. ինչո՞ւ պիտի թաքցնէի, այլ հէնց այնպէս դրի մի կողմը։

—Հապա ինչո՞ւ չկարդացիր։

—Յետոյ կը կարդամ։

—Դոնէ բանայիր ծրարը։

—Յետոյ բաց կանեմ։

—Երբ մենակ մնաս, հա՞։

—Այո, երբ մենակ մնամ.

—Նամակագիրը կի՞ն է։

—Չգիտեմ։

—Իսկ ես գիտեմ։ Նամակից թէ անոյշ հոտ է գալիս և թէ երկարաւուն է. բացի դրանից, ծրարի վրայի հասցէից երևում է, որ գրողը կին է։ Այդ մասին վիճել իսկ չի կարելի։

—Լաւ ուրեմն՝ մենք էլ չվիճենք։

—Լուիզի, ինձ տուր այդ նամակը,

—Մտքովդ էլ մի անցկացնիլ։

—Ինձ տուր այդ նամակը, ասում եմ, թէ չէ շատ կը զղջաս։

—Ի՞նչ ես կարծում, Լիւսիա. եթէ որ ես վարկաբեկող նամակներ լինէի ստանալիս, մի՞թէ չէի կարող այնպէս անել, որ քո ներկայութեամբ չստանայի։ Եթէ այդ էլ չլինէր, միթէ կարելի է մի այնպիսի անմիտ կին լինել, որ իրեն թոյլ տայ գրգռել օրինաւոր կնոջ՝ եթէ ոչ խանդոտութիւնը, բայց գոնէ հետաքրքրութիւնը։

—Օ՛, կանանցից շատերը միմիայն նրա համար են սիրահարւում, որպէսզի միջոց ունենան յանկարծ այդպիսի անմտութիւններ անելու։ Սակայն խնդիրն այդ չէ հիմայ, այլ այն՝ որ դու լսես իմ խորհրդին և այդ նամակն ինձ տաս, որովհետև ինձ արդէն չափազանց ձանձրալի է դարձել։

—Ի՞նչը։

—Այն՝ որ ահա մի ամբողջ ամիս է շատ սիրալիր կերպով ես վարւում հետս։ Քո այդ վարմունքն ինձ կասկածել է տալիս, որի մէջ չի կարող տարակոյս լինել։ Դու կրկին օրինակելի ամուսին դարձար, որովհետև էլի սիրուհի ունիս։

—Անհիմն բաներ ես ասում, սիրելիս։

—Ոչ, Լուիզի, քո գործելակերպը ինձ շատ լաւ յայտնի է։ Դու... ընդհանրապէս դիմակ ես առել դէմքիդ և քեզ այնպէս ես ցոյց տալիս, որպէս թէ շատ... [illegible] ես։ Բայց այդ բանն ամենևին չի սազում քեզ։ Այն՝ ինչ-որ դու անհրաժեշտութիւնից գրգռած անում ես, քո ույժից վեր է, դու այդ անում ես միմիայն իմ լիակատար վստահութիւնս գրաւելու համար։ Երբ չես դաւաճանում, դու ձանձրալի ես. այնինչ, երբ ուզում ես անպատճառ դաւաճանել ինձ, դու իբրև ամուսին, հրաշքներ ես գործում։ Իսկ այդ բանը ամենևին չի դուր գալիս ինձ։ Ընդհակառակը՝ այդ ինձ ձանձրոյթ է պատճառում։ Ես պաշտում եմ քեզ. բայց արդէն ութ տարի է մեր ամուսնանալը. հետևապէս ժամանակ է մի քիչ ուշքի գալու։ Կարճ ասած՝ քո սիրուհի ունենալդ ինձ կրկնակի վիշտ է պատճառում. մինչ՝ այն գգուանքներն են, որ դու շռայլում ես նրա համար. երկրորդ՝ այն անախորժութիւնները, որոնց հետ կապուած է այդ բանն ինձ համար։ Հապա ուրեմն հեշտութեամբ կարող ես հասկանալ, որ ես ամենևին տրամադիր չեմ այդպիսի պայմաններ ընդունելու։ Խոստովանիր ամէն բան, ձեռք վերցրու նրանից և ես կը ներեմ քեզ։ Ուզում ես։

Լուիզին լսում էր կնոջը գայրոյթի ժպիտը դէմքին։

Կինը շարունակ այն էր պնդում, որ նամակն ստանայ, իսկ ամուսինն էլ շարունակում էր մերժել։ Բայց երբ Լիւսիան դադարեց այլևս ցինիկ անվայել նկատողութիւններ անելուց և սկսեց ամենայն ան—

Գործակատար,—Ինչի՞ համար կը հրամայէք, աէրօպլանի՞ համար, թէ… կօստիւմացու։

Ցանալի (Շիլլէրից)

Եթէ քեզ ես ուզում ուսումնասիրել՝—նայիր մարդկանց և նրանց գործերին։
Եթէ մարդկանց ես ուզում ուսումնասիրել՝—սրտիդ խորքը թափանցիր։

Աւետ Մախաթունի

---

## Ն Ի Կ Ի Վ-Ի Ն

Վարդը գալկացաւ, խղճուկ թառամեց
Երգեր ու գալայլ լռեց սոխակին.
Բեշտակային գեղ նուագն էլ լռեց.
Գարունը փախեց աշնան թխպերին։

Ու մենք էլ ահա յոգնած, գաղտրած
Շուտով կը բռնենք կեանքի այս ուղին,
Ինչպէս սաղարթը աշնան ցուրտ պաղած,
Նանիր պատրանքը, ժպիտն աշխարհին։

Միր-Ջէնկ

---

## ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ

Աղջաղալեցի Բէգլարի ձին գողացան։

Այս օրերում նոյն գիւղացի Սարգիս Անտոնեանը տատրիկ ծեծեց Մինասին, որ մի շատ խեղճ մարդ էր գիւղում։

Մինասը ծեծն ուտելուց յետոյ, դիմում է ձիատէր Բէգլարին և յայտնում, որ իր աչքով տեսել է, թէ ինչպէս Սարգիս Անտոնեանը Բէգլարի ձին գողացաւ։

Ցայտնում են տանուտէրին, որ արձանագրութիւնը կազմելուց յետոյ, յանձնում է Բէգլարին, գանգատով դիմելու Գանձակի հաշտարար դատաւորին։

Գործի քննութեան օրը ներկայանում են մի աւազանում մկրտուած, հայ քրիստոնեայ երկու կողմերն ու վկան։

Լուսաթաթախ խաչով և սուրբ աւետարանով երդւում է վկան ճշմարիտը խօսել։

Դատաւորը լսելով վկայի երդումով ցուցմունքը և քննելով գործի մէջ տանուտէրի արձանագրութիւնը՝ մեղաւոր է ճանաչում, Անտոնեանին դատապարտելով նրան երեք ամսուայ բանտարկութեան և 55 րուբլի տուգանքի, յօգուտ ձիատէր Բէգլարի

—

Անտոնեանը բանտարկութիւնը քաշելուց յետոյ, վերադառնում է տուն և տեսնում, որ Բէգլարի գողացուած ձին, որի համար ինքը պատժւեց, դարձեալ գտնւում է տիրոջ մօտը։

Գիւղական հայ քրիստոնեայ տանուտէրը տալիս է մի վկայական, որի մէջ արձանագրում է, «Այն ձին, որի համար Անտոնեանը պատժւեց իբրև գող, ներկայումս գտնւում է ձիատէր Բէգլարի մօտ»

Գիւղացիներից մի քանիսը, էլի հայ քրիստոնեայ, մէկ աւազանում մկրտուած՝ պատրաստականութիւն են յայտնել, մինչև «Աստուծ պատի տակը» գնալ, երդւել բոլոր սրբութիւններով, կրծկրծելով եկեղեցու քարերը, հաւատացնելու դատաւորին, որ գողացուած ձին «սաղսալամաթ» գտնւում է ձիատէր Բէգլարի մօտ։

Օգըգեալլի

---

## ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍԻՐԱՀԱՐԻԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Զափից դուրս սիրահարուած օրիորդները, որոնք անկարող են բացատրել իրենց սէրը սիրածին, այլ այրւում են իրենք իրենց, խեղդելով սէրը սրտերում, ամենալաւ միջոցն է ժամը չորս գդալ սառը ջուր խմել և երբեմն երբեմն էլ, սառցի փոքրիկ կտորներ կուլ տալ։

Եթէ օրիորդը սիրահարուած է աղքատ ուսանողի վրայ և փող չունի նրան գրաւելու՝ թող տրամվայի տակ ընկնի, և տրամվայի վարչութիւնից ստանալիք գումարը կտակէ սիրած ուսանողին, ուսումը շարունակելու։

Ծնողներից ծածուկ սիրահարուած օրիորդները, որոնց ուշ-ուշ է յաջողւում տեսնել իրենց սիրածների հետ, թող Դարպասների Աստուածածնին մատաղ խոստանան սեփական աշխատանքից, որ ծնողները շուտ մեռնեն։

Այն օրիորդները, որոնք տարիներով սի-

---

կեղծութեամբ ու եռանդով խնդրել, լալ ու աղաչել ամուսնուն, որ եթէ նա լիակատար խոստովանի, ինքը ևս խոստանում է իրա կողմից սրտանց ներել. Լուիզին այդ բանից յուզուած ասաց.

—Լսիր, Լիւիա. քո այդ ենթադրութիւնը —թէ ես կրկին լաւ ամուսին եմ դարձել միմիայն այն նպատակով, որպէսզի քեզ դաւաճանեմ,—այնքան վիրաւորական է, այնպէս նենգամիտ ու անչափ անարդար, որ անկարող եմ այդ բանի համար քեզ չպատժել։ Իսկ ես քեզ կը պատժեմ նրանով, որ կապացուցանեմ, թէ ճիշտ է՝ ես անարդար եմ եղել քո վերաբերմամբ, բայց միաժամանակ նաև կապացուցանեմ, որ ես գոնէ այն աստիճան ընկած չեմ, ինչպէս դու ես կարծում։ Այո ճիշտ է, այս նամակը կին է գրել, որ մի որոշեալ ժամանակ իմ սիրուհին էր։ Ես իսկոյն ճանաչեցի նրա ձեռքը։ Այս նամակը, որ բոլորովին անսպասելի էր ինձ համար, ամբողջովին յանդիմանութիւններ է պարունակում իմ հասցէին. ես համոզուած եմ այդ բանում։ Ահա մի քանի ամիս է, ինչ ես նրա մօտ չեմ եղել, արդէն մի ամիս կը լինի, որ ես իմ բոլոր յարաբերութիւնները կտրել եմ նրանից… այո, արդէն մի ամիս կը լինի, որ ես մերժած եմ նրա նամակները ընդունելու… Եւ հիմա այս ամենն իմանալուց յետոյ, եթէ էլի բաւականութիւն կը պատճառի քեզ այս, ահա, առ կարդա։

Լիւիան վրայ ընկնելով, համարեա խլեց իրան մեկնած նամակը, մի ակնթարթում պատռեց ծրարը, իսկ Լուիզին բոլորովին լուռ, բայց և ոչ առանց երկիւղի, սպասում էր իր լիակատար խոստովանութեան հետևանքին։

Լիւիան աչքերով ագահաբար ուտում էր նամակը, որի բովանդակութիւնը հետևեալն էր։

Լուիզի.

«Դու ինձ թողիր, որպէսզի վերադառնաս կնոջդ մօտ։ Դու այդ ինձ ասացիր մի այնպիսի անամօթութեամբ, որ երևում էր, թէ այդ բանը քո աչքով ազնուութեան վերջին աստիճանն է։

Սակայն երբ մի ազատմարդ սիրուհուց ձեռք է վերցնում իրա կնոջ համար, նա ամենամեծ դաւաճանն է, նա ցածութիւն է գործում, իսկ իրան արդարացնելու համար, չի կարող առաջ բերել նոյնիսկ այսպիսի դէպքերում սովորական մեղմացուցիչ միակ հանգամանքը—անկեղծ սէրը։ «Այո, դու չես սիրում կնոջդ, և նա էլ իրա կարգին քեզ չի սիրում։ Եթէ դու նրան սիրելիս լինէիր, քո բարոյական պարտքը կը համարէիր, նրա վրայ աւելի լաւ հսկողութիւն անելու։ Եթէ կինդ քեզ սիրելիս լինէր, հաստատ է որ նա շաբաթը երեք անգամ, այն է՝ երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ,* ճաշերից յետոյ ժամը հինգի մօտերքը չէր գնալ Principessa Margerete փողոցի № 35 տան ներքին յարկը, ուր նրան սպասում է մի ինչ-որ զինւորական»։

Ներինա

Իրօք տեղի ունեցող իրողութեան մասին այդպէս զարմանալու չափ մանրամասն տեղեկութիւնները, որ տրւում էր այդ անսպասելի մատնութեամբ, երկիւղով լցրին Լիւիային։ Նրա երեսի գոյնը թռաւ, սարսափից կապտեցին կարմիր շրթունքները և նա երերալով յետ ընկրկեց, կարծես իրան դիմող ապուտկանից փախչել կամենալով և ընկաւ բազկաթոռի վրայ ու գլուխը յետ գցեց։ Բայց և այնպէս ինքնապաշտպանութեան բնազդը դրդեց նրան ամուր սեղմել իր այն ձեռքը, որի մէջն էր սարսափելի մերկացումներով նամակը։

Ամուսինն զգալով իր կրկնակի մեղաւորութիւնը, ծնկի եկաւ կնոջ առջև, սկսեց համբուրել ու գգուել, քնքշանքով պատած ճակատը։

—Լիւիա, Լիւիա… սիրելիս, իմ անգին… տեսնո՞ւմ, տեսնո՞ւմ… բայց դու ինքդ կամեցար այդ։ Պարզ է, որ քո կողմից այդ մի

բաճարուած են եղել և երջանիկ ժամեր են անցրել, իսկ յետոյ մի չնչին բանից նեղացել, խռովել ու բաժանուել են, կաթուածք չստանալու համար, անմիջապէս յետ պահանջեն իրենց գրած նամակները, վերադարձնելով սիրածի լուսանկարը, մի քանի անգամ էլ կրծքին սղմելուց ու համբուրելուց յետոյ։

Թօխար

## ՄԱՆՐ—ՄՈՒՆՐ

Երկար ժամանակ կնոջից բաժանուած զոկը վերադառնում է տուն ու մինչ ուրախացած կինը, ուելը ձեռքին սենեակն է մաքրելիս լինում, խնդրում է մարդուն իր հետ փոքր ինչ քաղցրախօսել, մինչև գործը վերջացնելը։ Կոմպլիմենտների անսովոր զոկը ժպտերես դառնում է ջահել կնոջ.

—Ախ, էդ ձեռքիդ ուելը կծեմ։

Հրէան գիւղում պառաւից գնում է 8 հաւ մի ռուբլիով.

—Նանի ասում է հրէան, այս ութ հաւը ես քեզանից առայ մի ռուբլիով, ափսոս որ այժմ մոտս փող չկայ, վաղը փողը կը բերեմ, բայց որպէսզի դու ապահով մնաս (ես դուզ մարդ եմ. հարամութիւն չեմ սիրել), առ այս վեց հաւը քեզ մօտ մնայ գրաւ, վաղը ռուբլին կը բերեմ, կը տանեմ։

—Լաւ, թող մնայ, վաղը կը բերես։

—

Եղնիկին որսորդները գնդակով խփել էին վիրաւորել, բայց չէր ընկել։ Արագավազ ոտքերին ույժ տալով, նա հասաւ մի ջրի եզերք, քիչ ջուր խըմելու, հանգստանալու։ Ջրի եզերքին ոզնին նկատելով լացող եղնիկին՝ սրա դարդը հարցրեց.

—Ի՞նչ ասեմ քեզ, ոզնի, որսորդը վիրաւորեց ինձ, ահա գնդակը աջ կողքիս մէջն է...

—Զարմանում եմ, ի՞նչ են ուզում մարդիկ մեզնից, որ այսպէս անխնայօրեն հալածում են մեզ ու գնդակահարում։

—Ոզնի, որսորդի գնդակն ինձ այնքան ցաւ չպատճառեց, որքան քո այդ խօսքերը, պատասխանեց եղնիկն ու սլացաւ առաջ։

## ԲԱԼԱԽԱՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

—Միրզաջան, այս ինչ եմ լսում, իբրև թէ գործից հեռացել ես...

—Աւելի շուտ ասա, դուրս են արել.

—Ի՞նչպէս, ինչ պատճառով։

—Հենց էնպէս, առանց պատճառի. մեր նոր գուբերնաչչին խոմ գիտես, թեւցս բըռնեց ուղղակի կանտորից դուրս գցեց,—ասելով—«Դուրս կորիր, անպիտան, դեռ համարձակւում ես խօսելու»

—Լաւ, դեհ երեխայ խոմ չէիր, կանտորում գուբերնաչչու ընդդէմ ինչու ես խօսում։

—Ի՞նչ եմ խօսել որ. ասեցի, աղա ախր դուք էք կարգադրել, ո՞վ է մեղաւոր... խօսքս բերանումս թողեց, կատաղած վրայ պրծաւ ու դուրս գցեց։

—Երևի կառավարիչը այնտեղ էր հա.։

—Այո, այնտեղ էր, բայց ինչ կայ որ, ինչ որ ճշմարտութիւն էր, այն ասեցի, խոմ ես մեղաւոր չէի որ ինքը սխալ...

—Հէ՜ր օրհնած, բա կառավարչի մօտ գուբերնաչչուն սխալ դուրս կը բերե՞ն, չէ որ նրանք անսխալ և անմեղ են, դեհ ինձ... դուրս կանեն։ Քեզ էլ հարցնում եմ, ա... ում ես, հենց էնպէս, առանց պատճառի... բա դեհ էնպէս առանց պատճառի է՞, ներկայումս դրանից աւելի յարգելի պատճառ էլ ինչ կայ,

—

—Հ՜ը, Բախշի, աչքի լոյս է, չէ... այսօր... ւանից արդէն գործի դուրս կը գաս։

—Չէ, հողիս, չէ. մեղաւորին ճմ է ... արքայութիւն։

—Ի՞նչ ես ասում, ինչ կայ այդտեղ մեղաւորութեան, ազատ տեղ կայ, դուն է... հին ծառայող...,

Հենց ցաւն էլ դրանումն է, որ ազատ տեղ կայ, չի ընդունում...,

—Ինչու։

կամակորութիւն էր, դու նոյնիսկ չէիր էլ կասկածում վրան. որովհետև եթէ դու կասկածելիս լինէիր, հաստատ է որ այդ նամակը վրադ այդպիսի սարսափելի տպաւորութիւն չէր անիլ... սակայն երդւում եմ, որ այդ կնոջ հետ այլևս երբէք, երբէք չեմ տեսնուիլ։ Մի տանջուիլ, այդպէս մի արտմիլ... մի՞թէ չես տեսնում, որ այսուհետև այլևս որևէ կապ չի կարող լինել իմ և այդ կնոջ միջև։ Այդ բանում քեզ պէտք է համոզէր նամակը... Ոչ, ձեռքդ այդպէս մի սեղմիլ։ Ես չեմ կամենում, որ այդ նամակը քո ձեռքդ ապականէր։ Չեմ ուզում, չեմ ուզում...

Լիւսիան շշնջաց.

—Մի յուսայ որ յետ կստանաս այս նամակը։

—Հապա ինչ պէտք է անես, հարցրեց Լուիզին, սարսափից լայն բանալով աչքերը։

—Մի հարցնիլ։

—Ի՞նչ ես կամենում անել, Լիւսիա։

—Այս նամակը այսուհետև ինձ է պատկանում։

—Ուրեմն դու կամենում ես գնալ նրա մօտ... Դու ուզում ես այդ նամակը նրա երեսովը տալ... Ուրեմն դու կամենում ես ողբերգութիւն, դժբաղդութիւն, դժոխք սարքել... Սակայն ինչու, ինչու համար։ Դու նոյնիսկ պարտաւոր ես երբէք չհանդիպել այդ տեսակ կնոջը... Լիւսիա, իմ Լիւսիա, աղաչում եմ...

Բայց որովհետև բառ առաջնոյն շարունակում էր անհաւատալի ոյժով սեղմել նամակը իրա բռի մէջ, Լուիզին ստիպուած եղաւ ոյժ գործ դնել։ Կռիւը յուսահատական էր, բայց կարճատև։ Լուիզին իր պողպատեայ մատներով բաց արաւ կնոջ ձեռքը և խլեց ճմրթուած նամակը։

Լիւսիան վեր թռաւ տեղից և յուսահատութիւնից սարսափած ձայնով, հազիւ կարողացաւ միայն արտասանել ատամների միջից.

—Այդ կինը սուտ է։

Ամուսինն այլևս վստահ, որ կարող եղաւ խոյստովանութեան առաջն առնել, շատ պարզօրէն ու քնքշութեամբ պատասխանեց.

—Մի հոգալ այդ մասին՝ որ նրա վարկը իմ աչքում վայր գցես։ Նրա սիրոյ բարնկունմները ինձ վրայ չեն ազդում։ Ես նրան չեմ սիրում և նոյնիսկ երբէք էլ չեմ սիրել, ուստի և նրա սիրոյ բոցով՝ շինծու թէ անկեղծ, ինձ համար միևնոյնն է, ես կը օգտեմ իմ սիգարս կպցնելու։

Ահա, առ։

Եւ այդ ասելով, Լուիզին, հանգիստ ժըպիտը երեսին, գրպանից հանելով պորտսիգարը, վերցրեց մի հատ հաւանեան սիգար, ապա նամակը ոլորեց, թեքելով դէպի վառւող բուխարին, իսկական արտխալին վայե... շարժումով վառեց թուղթը և կպցրեց սիգարը։

Սարսափելի արագութեամբ միմյանց յաջորդող տպաւորութիւնների փոթորկից ... լէկոծութեան մէջ ծփացող Լիւսիան՝ անշարժութեան դիմակի տակ ծածկելով, հիացմունքով էր դիտում ամուսնու արածը։ Ա... ինը նորից հոսեց դէպի նրա այտերը ... շրթունքներն իրանց նախկին գոյնն ստացան։ Անկեղծ շնորհակալութեան բուռն զգացմունքից, նրա փոքրիկ կաղմածքը բոլորովին կենդանացաւ։

Եւ երբ վառած նամակի մնացորդներն ... ընկան բուխարու մէջ ու Լուիզին յաղթական ժպիտով ծխի քուլաները դուրս թողեց բերանից, իր հոլանի թևերով գրկեց ամուսնու գլուխը, ծածկելով նրան այնպիսի համբոյրներով ու գգուանքով, որոնք պարզ ... ապացոյց էին, թէ շնորհակալ կնոջ քաղցրութիւնները Լուիզիի համար յետոյ են ... նելու, ու կամաց, ամբողջովին քնքշութ... կտրուած շշնջաց.

Օ՛, Լուիզի, Լուիզի՜... դու մի հրեշտակ ես եղե՜լ...

Թարգմ. Լեւոն Մ.-Աղ.

—Ասում է, մեզ ամուսնացած մարդ հարկաւոր չէ, մեզ թեթեւ ոտքերով մարդ է հարկաւոր…

—Հա… արդէն ամուսնացել ես հա. շատ անյարմար ժամանակն ես ամուսնացել… հէր օրհնած, մի գործի լինէիր, յետոյ. չը գիտե՞ս որ հիմի ամուսնացածներին դժւար են ընդունում, ընդունւածներն էլ իրանց խնամիներից պիտի լինին…

—

Տարելշչիկը.—Ուստայ Նիկօլ, այսպէս բան չէ կարելի, առանց կայ տարելումը, մինչեւ գործի մէջ չկայ։

Ուստա Նիկօլը.—Օ՜հ, օ՜հ, օ՜հ, ինչ մեծ բան է… տնաքանդ, մի շարք պաշտօնեաները. ոչ մէկը չկայ կեանքի մէջ, մինչդեռ թղթի վրայ գրւած կայ, թող լինի որ, քո տարելումն էլ իմ անունս լինի, իսկ գործի մէջ ոչ. մեծ բան է։

—

—Սարգի՛ս, դեռ անգործ ես, հա… այսքան ժամանակ մի գործ չկարողացա՞ր գտնել…

—Չէ, չեմ գտել, բայց մի գործ եմ հընարել

—Ի՞նչպէս թէ հնարել, ի՞նչ գործ.

—Փողոցներն եմ չափում, Զարբաղից—Սարունջի, Սարունջուց—Օտամանի, Օտամանուց—Բալախանի…

—Լաւ գործ ես հնարել. բա փողերդ ումից պիտի ստանաս։

—Ի՞նչպէս թէ ումից, «Советъ Съѣздъ»-ից։

—Բա քեզ նա զուր տեղը փող կը տայ…

—Բան ասացիր էլի, բաւական է որ «счетъ» տամ, նրանք չեն էլ խաբար, թէ ինչի են տալիս։ Համ էլ միլիոնը չէ՞, նրանց ինժեները պէտք է չափի այդ ճանապարհը, եթէ նա հաշիւ ներկայացնէ, թէ այսքան սաժեն է այն ինչ ճանապարհը, ես կը ներկայացնեմ մինչեւ անգամ քանի ոտնաչափ, կամ մատնաչափ լինելը։

Մոն-Սի

## ԴԻՍԻՑ-ԴԻՆԻՑ

Գնացքի կոնդուկտորը մօտենում է մի կնոջ, որ իւր 14 տարեկան որդու համար կէս տոմսակ է վերցրել։

—Տիկին, ձեր որդու համար պէտք է լըրիւ տոմսակ վերցնէք։

—Այդ ինչու՛։

—Մեզանում միայն մինչեւ 5 տարեկան երեխաներն են օգտւում կէս տոմսակով։

—Է՛, նա հենց նոր է ոտ դրել հինգում։

—Ի՞նչպէս կարելի է, ափաչկարայ երեւում է, որ 5-ից շատ և շատ մեծ է։

—Ախ Տէր-Աստւած՛ անա քանի երրորդ տարին է, ես որդուս հետ այս ճանապարհներով ճանապարհորդում եմ—և միշտ նա հինգ տարեկան է եղել, իսկ այժմ յանկարծ աւելացա՜ւ։

—

Հիւանդ.—Ասացէք ճիշտը պ. բժիշկ, իմ հիւանդութիւնն արդեօք ձեզ չէ՞ անհանգըստացնում?

Բժիշկ.—Ոչ, ինձ համար նա առանձնապէս անհանգստացուցիչ չէ, բայց…

Հիւանդ.—Բա՞յց…

Բժիշկ.—Բայց ձեզ համար նա շատ անհանգստացուցիչ է…

Մ.

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Թիֆլիզ. Մ. Տ. Խ. Սանկ-Մանին.—Անյարմար է, երբ առիթ ունենանք Ձեզ տեսնելու, այն դէպքում այդ առթիւ կը խօսենք.

Երեւան. Շատէլ-Արարին.—Այդպէս էլ է լինում։

Հին-Նախիջեւան. Ս. Ե. Եանին.—Միթէ. Զարմանալի էլ չէ. Դուք ինչ կարծիք ունէք լուսնի մասին։

Բաթում. Կ. Օր-ովին.—Աւելի դժւար դրութեան մէջ եղողներուն էլ տեսել ենք. դուք, փառք Աստծոյ, ասում էք թէ խելք ունէք, եթէ որ խելք ունէք, էլ ինչ հոգս ունէք։ Իսկ նրանք ինչ անեն, որոնք նամանաւանդ խելքի պակասութիւն ունին։

Թիֆլիզ Մարգար…ին.—Աստւած համբերութիւն տայ։ Դժւար է Ձեր բանը։ Լաւ է եթէ իրօք մի քիչ հարստութիւն ունենայիք, էապէս հինգ-վեց միլիօն, հաւատացած եմ, որ ձեր բանը լաւ կը լինէր։

Բագու. Սի-Նային.—Ո՛չ, դեռ չեմ տեսել. դուք եղել էք։ Չեմ նախանձում։ Ձեր կարծիքով Երուսաղեմում… չկա՞ն։

Ղամարլու. Գրագարան-ընթերցարանի վարչութեան.—Ձեր հանգէտով բաժանորդագին չենք ստացած։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

**ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ**

Ցանկանում է ամառանոցում դասեր ունենալ գիմնազիայի մինչեւ V դասարանի կուրսից.

Դիմել՝ «Խաթաբալա»-ի խմբագրութեանը

Ս. Դոտոեանց

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

**ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ**

(Фото-Цинкографія)

ՏԵՂԱՓՈԽԻԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ։




ՅՈՎ. ԵԱԿ. ՔԱՄՈՅԵԱՆՑԻ

**ՉԿՆԱՐԴԻԻՆԱՐԵՐ** ՉՐՆՔԻՑ

ՉԿՆԱՑԻՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ

ՋԱՔԱՐԻԱ ՋԱՔԱՐԵԻՉ ԴԱԻԻԴԵԱՆՑ

Թամամշեւր քարաւանսարա Պուշկինեան սկսերի դիմաց տելէֆոն № 272.

**ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆ**

**ՆԱԽԱԿԱՏԻԿԻ**

պատճառով ստացւած է ամենաթարմ ձկնեղէն մթերքներ

Պատրաստւած է և եփած ԹԱՐԹԻ ԴՈՇ, ՍԵՒՐՈՒԳԱ, ՅԱՂՋԻԱԼԱ ԵԱՆԻ, ՃԻՊԱ

ՊԱՐԿՈՎ և ՀԱՏԻԿԱՒՈՐ ԽԱՒԻԱՐ

ԲԱԼԻԿՆԵՐ, (զուրգիել) սեւարինից Դոնի նման, նոյնպէս և ամառանոցային՝ սիրողների համար,—ամբողջը արժէ ֆ. 30 կոպ. 4-ից աւել ֆունտ. իսկ կտրածը ֆ. 35 կոպ.

ԱՆՍՊԱՌ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԿՆԵՂԷՆ ԱՄԵՆԱԹԱՐՄ ՏԵՍԱԿԻ.

Լոյս տեսաւ և վաճառւում է

**ՀԱՑԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ**

Գրական ժողովածու Գր. Չալխուշեանի խմբագրութեամբ. ի նպաստ սովեալ Զէյթունցիների.

Գինն է 2 ռուբլի

Պահեստը Գր. Չալխուշեանի մօտ
Ростовъ н Д. Б Садовая № 174.








МАГАЗИНЪ

**Композиція**

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія
шведскаго компо-
зиціон. бѣля.
→Носится не менѣе
двухъ лѣтъ←
Постоянный боль-
шой выборъ свѣжаго
товара
**Воротниковъ, мани-
шекъ и манжетъ.**
Единственный
представитель для Ти-
флиса и ихъ окрест-
ностей

по фабричнымъ цѣнамъ
передѣлка въ любой фасонъ безплатно
М. А. КАЛТАГЯНЦА





**ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ**

**„ՊՐՕՎՕԴՆԻԿ"**

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենայայտ Աշխարհում

ԱՆԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յարկութեան, չքեղ ֆասոնների և ամենալաւ գործածուող նիւթերից



**ԱՐՏՕՆԻԱԾ**

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ**

**ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ**

**ՊՐՕՎՕԴՆԻԿ**




1888

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

**Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս**

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

## ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ




Մահւան 30 ամեայ տարեդարձի առթիւ։

## ԳԱՆՁԱԿՈՒՄ




Հայրումեան ազգանունով մի պարոն գլուխ է գալիս 2 րուբլով և համաձայնւում է, այսպէս համետի վերայ նստած՝ շրջել Գանձակի փողոցներում։ Յար և նման մարդիկ շատ կան և ուրիշ տեղեր, որ փողի համար ամէն բանի ընդունակ են։

## ԹԻՖԼԻԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՔԱՄՈՅԵԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ



—Պ. Ճարտարապետ! մտադիր էիք եկեղեցին զուտ հայ արւեստով վերջացնել, անգին փող ծախսեցիք—ինչպէս եղաւ, որ հիմայ այդ սիրուն կերտուածները նախշքեարներին էք ներկել տալիս։
—Այդ մտադրութիւնը Ձեր աճեան Արշակն ունէր.—իսկ մենք մտադիր ենք և էժան և շուտ պրծնել եկեղեցին։ Այժմ ով է հետաքրքրւում հայ ճարտարապետութիւնով։



ԱԴԱՆԱՅՈՒՄ

Երիտասարդ Թիւրքերի դատավորութիւնը պատժում է կոտորածից ազատուած հայերին։

# Կ. ՊՈԼՍՈՒՄ



ՀԵՌԱԳՐԱՏԱՆԸ

—Էֆենդիմ. կուզեմ Ռուստաստան, Երեւան քաղաք հեռագիր տամ, առեւտրական գործեր ունեմ, ըսէք ինչ պիտի վճարեմ։

—Ջանըմ, Երեւան ինչու կը հեռագրէք, աւելի լաւ է Բագու հեռագիր քաշէք, ան ալ Ռուստաստան է։